ՎԴ/2722/05/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4 հուլիսի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/25 որոշումն ամբողջությամբ կատարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/2722/05/22 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի մայիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ն 2022 թվականի ապրիլի 29-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ պաշտպանության

նախարարության, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին ամբողջությամբ կատարել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/25 որոշումը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Գ.Սոսյան) 2022 թվականի մայիսի 10-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Դատարանը (...) գտնում է, որ «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ի հայցադիմումով ներկայացված պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի ուժով գնումների, ինչպես նաև բողոքի քննման հետ կապված հարաբերությունները սահմանվել են որպես քաղաքացիաիրավական հարաբերություններ, ուստի դրանցից ծագող վեճերը կարող են կարգավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:*

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հայցվորը հայցում է ոչ թե հենց բուն գնման գործընթացում ընդունված որոշման վիճարկում, այլ նրա պահանջը վերաբերում է գնման հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը կատարելուն, ապա պահանջի նման ձևակերպումը ևս չի փոխում իրավահարաբերության բնույթը, քանի որ այդ որոշման ընդունմանն ուղղված գործընթացը վարչարարություն չհանդիսանալու և, ըստ այդմ էլ, դրա արդյունքում ընդունված որոշումը վարչական ակտ չլինելու պայմաններում նման որոշման կատարման հետ կապված վեճը նույնպես չունի վարչաիրավական բնույթ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ սույն վարչական գործով վեճի՝ հանրային բնույթ չունենալու պայմաններում հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, հետևաբար հայցադիմումը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (...)»:

3. Թիվ ՎԴ/2722/05/22 գործը 2022 թվականի մայիսի 16-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Տաշչյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Մ.Տաշչյան) 2022 թվականի մայիսի 30-ի որոշմամբ, գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունները. *«Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցի առարկան դուրս է «ՀՀ Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումների շրջանակից, այսինքն՝ հայցի առարկան կապված չէ բուն գնման գործընթացի հետ այն առումով, որ հայցվորը չի վիճարկում բողոքներ քննող անձի կողմից գնման գործընթացի հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացրած որոշումը, այլ հայցի առարկան վերաբերում է բողոքի քննության արդյունքում կայացված 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԲԳՔԱ-Լ0-2022/25 որոշման կատարմանը, մասնավորապես, մեկ վարչական մարմնի կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարարության, մեկ այլ վարչական մարմնի՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից, կայացրած 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԲԳՔԱ-Լ0-2022/25 որոշումը կատարելուն պարտավորեցնելուն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել, ինչը տվյալ դեպքում առկա չէ, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումների կատարումը պետական մեկ այլ մարմնի կողմից, դրանք ոչ թե քաղաքացիաիրավական հարաբերություններ են, այլ դրանք հանրային իրավահարաբերություններ են, և հետևաբար, տվյալ իրավահարաբերության*

առկայության պայմաններում դրանից ծագող իրավական վեճը չի կարող քննվել քաղաքացիական դատավարության կարգով»:

5. Թիվ ՎԴ/2722/05/22 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունիսի 30-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

6. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *գնման հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշման կատարման հետ կապված հարաբերությունները ծագում են հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերություններից*:

7. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական

դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

10. Սույն որոշման 7-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

11. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ»*

ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]*:*

12. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել գնումների գործընթացի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

13. Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 23-րդ կետերի համաձայն՝ «*Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. **գնում՝** պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, **գնման գործընթաց՝** գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը»:*

Նույն օրենքի՝ մինչև 01.06.2022 թվականը գործող խմբագրությամբ 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»:*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

Նույն օրենքի ՝ մինչև 01.06.2022 թվականը գործող խմբագրությամբ 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝*

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման, (…)»:

14. Սույն որոշման 13-րդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացը՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, որում ներառվում են գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Հարկ է նշել, որ մինչև 01.06.2022 թվականը գործող խմբագրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքը նախատեստում էր գնման գործընթացի հետ կապված գործողությունները (անգործությունը) կամ ընդունված որոշումներն արտադատական կարգով բողոքարկելու ընթացակարգ՝ միաժամանակ ուղղակիորեն սահմանելով, որ ինչպես բուն գնումների, այնպես էլ դրանց կապակցությամբ կայացված որոշումների կամ գործողությունների (անգործության) դեմ բերված բողոքների քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Այսպես՝ մինչև 01.06.2022 թվականը գործող խմբագրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով օրենսդիրը սահմանել է այն որոշումների շրջանակը, որոնք կայացնելու իրավասությամբ օժտված էր գնումների հետ կապված բողոքներ քննող անձը: Այդ որոշումների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք ուղղված են եղել իրավասու մարմնին բուն գնման գործընթացի հետ կապված որոշակի գործություններ կատարելուն պարտավորեցնելուն *(օրինակ՝ չկայացած հայտարարել գնման ընթացակարգը)* կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալուն: Այլ կերպ ասած՝ նշված որոշումների կատարումը ենթադրում է գնման գործընթացի իրականացմանն ուղղված՝ քաղաքացիաիրավական բնույթի որոշակի գործողությունների կատարում կամ անգործության դրսևորում, հետևաբար նման վարքագծի դրսևորման արդյունքում կարող են ծագել բացառապես մասնավոր իրավահարաբերություններ՝ անկախ այդ հարաբերությունների մասնակիցների կարգավիճակից:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդրի նպատակն ուղղված է եղել գնումների գործընթացի բողոքարկման հարաբերությունները որպես քաղաքացիաիրավական դիտարկելուն, իսկ այդ հարաբերությունները, բողոքարկման բուն գործընթացից բացի, ընդգրկում են նաև բողոքի քննության և դրա արդյունքում կայացված որոշման կատարման հետ կապված հարաբերությունները՝ դրանք նույնպես դիտարկելով որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների բաղկացուցիչ մաս:

15. Այսպիսով՝ սույն գործով «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ծագած վեճը վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գնման հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշման կատարմանը, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ծագած իրավական վեճը բխում է մասնավոր իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/2722/05/22 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/2722/05/22 գործն ըստ հայցի «ՄԵԳԱ-ՍՎԵՏ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ զնումների հետ կապված բողոքներ քննող անձի 2022 թվականի ապրիլի 4-ի թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/25 որոշումն ամբողջությամբ կատարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ